

ՔԻՇ ԱԶԱՏ ԳՈՏՈՒ ԴԵՐԸ ԻՒՅ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հասանալի ՆԱԶԱՖԻ

ԵՊՀ կառավարման և գործարարության
ամբիոնի հայցորդ
Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր
պրոֆեսոր Ս.Լ. Ղանթարյան

Բանալի բառեր. ազատ գոտիներ, ապրանքաշրջանառություն

Քիշ ազատ գոտուց արտահանվող ապրանքների դիտարկումը ցույց է տալիս, որ այս տարածաշրջանը ներկայումս բացառիկ նշանակություն ունի Իրանի արտահանումների ոլորում, սակայն նկատի առնելով Քիշ կղզու և ազատ գոտու ներուժը, նրա աշխարհագրական տեղն ու դիրքը Պարսից Ծոցում և տնտեսական ռազմավարական նշանակությունը, այս շրջանն ի վիճակի է շատ ավելի մեծ դեր ստանձնել և մեծացնել իր արտահանումների ծավալն ու արժեքը: Քիշ կղզին կարող է առանձնակի նշանակություն ունենալ Պարսից Ծոցի հարևան երկրներին արտահանվող ապրանքների ոլորտում:

2005-2013 թթ. ընթացքում Քիշ կղզուց տարբեր արտադրողական ապրանքների արտահանման, տրանզիտի, ժամանակավոր դուրսբերման և կրկնակի արտահանման վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց են տալիս, որ այս ժամանակահատվածում արտահանված ապրանքների դոլարային արժեքը համընթաց է աճի դինամիզմին, թեև այդ աճը շարունակական չէ, այլ զուգակցված է վայրիվերումներով:

2005 թվականին Քիշ ազատ գոտուց արտահանված ապրանքների դոլարային ընդհանուր արժեքը կազմել է 274,725,000 դոլար, որն այնքան էլ բարձր չէ Իրանի ոչ-նավթային արտահանումների ընդհանուր ծավալի համեմատությամբ: 2006 թվականին Քիշ կղզուց արտահանումների ծավալը անկում է գրանցել՝ կազմելով 180,595,000 դոլար: Այս նվազումը շարունակվել է մինչև 2008 թվականը և Քիշ կղզուց արտահանված ապրանքների դոլարային արժեքը նվազել է: 2007-ին Քիշ ազատ գոտուց արտահանված ապրանքների ընդհանուր արժեքի անկումը կազմել է 18 տոկոս և հասել է 147.731. 000 դոլարի, ինչը անմխիթար ու անբավարար վիճակի մասին է խոսում: Այս անկման միտումների պատճառը պետք է փնտրել պետության որդեգրած քաղաքականության և տարածաշրջանային տնտեսության զարգացումների

մեջ: 2008-ին շարունակվել է վայրընթաց միտումը և արտահանումների դոլարային արժեքը կազմել է 147,549,000 դոլար: Գիշտ է, նվազումը շատ աննշան չափերով է տեղի ունեցել, բայց դա խոսում է Քիշ ազատ գոտուց ոչ-նավթային արտահանումների անմխիթար վիճակի շարունակման մասին:

Քիշ ազատ գոտուց ոչ-նավթային ապրանքների արտահանման ցուցանիշների անկումը կարելի է նաև մասամբ վերագրել տնտեսական համաշխարհային ճգնաժամի հետևանքներին և տարբեր ապրանքների պահանջարկի նվազմանը: 2009-ին անկման գործընթացը կտրուկ փոփոխություն արձանագրեց և ունեցավ 137 տոկոս աճ՝ հասնելով 349,974,000 դոլարի:

2009-ին Քիշ ազատ գոտուց արտահանվող ապրանքների դոլարային արժեքի կտրուկ բարձրացումն ավելի շուտ արդյունք էր ոչ թե տնտեսական բարեփոխումների կամ արտահանման հատուկ նախագծի, այլ համաշխարհային տնտեսության վերականգնվող ընթացքով և համաշխարհային մասշտաբով դոլարի փոխարժեքի անկմամբ: Համեմատելով Քիշ ազատ գոտու 2009-ի արտահանումների ծավալը 2005-ի ցուցանիշների հետ տեսնում ենք, որ 4 տարվա ընթացքում գրանցվել է 27 տոկոս աճ:

2010-ին Քիշ ազատ գոտու արտահանումների ցուցանիշները վկայում են, որ վերելքը շարունակվել է նաև այս թվականին և 2009-ի համեմատությամբ գրանցվել է 9 տոկոս աճ, ինչը համաշխարհային տնտեսության բարելավման և դոլարի համաշխարհային փոխարժեքի անկման արդյունք էր: Նկատի առնելով նախորդ տարիներին այս բնագավառում գրանցված տատանումները, ըստ երևույթին, այս 9 տոկոսանոց աճը խոսում է 2009-2010 թթ. աճի համեմատական կայունության մասին, որը 2011-ին նկատելի վերելք ունեցավ:

2011-ին Քիշ ազատ գոտուց արտահանված ոչ-նավթային ապրանքների դոլարային արժեքն ունեցավ ավելի քան 87 տոկոս աճ՝ նախորդ տարվա 382,812,000 դոլարից հասնելով 716,849,000 դոլարի: Քիշ ազատ գոտուց ոչ-նավթային արտահանումների դոլարային արժեքի կտրուկ բարձրացումներն ու անկումները ավելի շուտ ոչ թե Իրանի արտահանման մոդելների հաջողության կամ տնտեսական պայմանների բարելավման արդյունք են, այլ արտացոլում են տնտեսական կտրուկ տատանումներն ու վայրիվերումները այդ ժամանակահատվածում:

2011-ին Քիշ ազատ գոտուց արտահանվող ապրանքների արժեքի կտրուկ աճը կտրուկ անկում ապրեց 2012-ին և հասավ 366,440,000 դոլարի, այսինքն արձրանագրեց 49 տոկոս նվազում: Իհարկե, եթե հաշվի չառնենք 2011-ի կտրուկ բարձրացումը, ապա 2010-ի համեմատությամբ անկման մակարդակը կազմում է 4 տոկոս:

2012-ին գրանցված արտահանվող ապրանքների դոլարային արժեքի անկումից հետո 2013-ին նկատվեց ապշեցուցիչ կերպով բարձր թռիչք և այն հասավ շուրջ 996,631,000 դոլարի մակարդակի, այսինքն նախորդ տարվա համեմատությամբ տեղի ունեցավ 172 տոկոսի աճ:

Ընդհանուր առմամբ, 2005-ից 2013 ժամականահատվածում Քիշ ազատ գոտուց արտահանվող ապրանքների դոլարային արժեքի ցուցանիշները վկայում են, որ դրանք ունեցել են վերընթաց շարժ, սակայն զուգակցված են եղել կտրուկ վայրիվերումներով: Բացի այդ, դոլարի փոխարժեքի նվազումը, արտահանվող ապրանքների բազմազանությունը և դրանց գնային տատանումները դժվարացնում են Քիշ ազատ գոտու ոչ-նավթային արտահանումների ճշգրիտ սխեման ուրվագծելու գործը:

Նշված տարիների ընթացքում պետության կողմից Քիշ ազատ գոտու արտահանման ոլորտի չկարգավորումը և ազգային արժույթի կտրուկ անկումը հանգեցրին ռիալ-դոլար փոխարժեքի անկման: Դրան պետք է ավելացնենք նաև տարածաշրջանային և միջազգային շուկաների զարգացումներն ու փոփոխությունները, որոնք Քիշ ազատ գոտու ոչ-նավթային արտահանումների տատանման հիմնական պատճառներն են:

Այժմ վերլուծենք Քիշ ազատ գոտուց արդյունաբերական ապրանքների արտահանումների գործընթացը

Քիշ ազատ գոտում արտադրված արդյունաբերական ապրանքների արտահանման ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2005-2013 տարիներին դրանք աննշան թիվ են կազմել Իրանի արտահանումների ընդհանուր համակազմում՝ լավագույն դեպքում հասնելով մոտ 25 տոկոսի, իսկ վատագույն դեպքում՝ 5 տոկոսի: Վիճակագրական տվյալները բերված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Քիշ ազատ գոտում արտադրված արդյունաբերական ապրանքների արտահանման դոլարային արժեքը 2005-2013թթ. (հազար դոլար)

Բացատրություն	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Արդյունաբերական արտահանում	13541	10615	19451	25650	88088	69558	79629	47735	54702

Ինչպես երևում է աղյուսակից՝ 2005 թվականին Քիշում արտադրված ապրանքների արտահանման արժեքը կազմել է 13,541, 000 դոլար, որն հավասար է Քիշ ազատ գոտու ընդհանուր արտահանումների ընդամենը 5

տոկոսին: Հաջորդ տարի 2006-ին, չնայած Քիշ ազատ գոտուց արտահանումների ընդհանուր արժեքի 94,130,000 դոլարի նվազմանը, այդուհանդերձ, բարձրացել է արդյունաբերական ապրանքների մասնաբաժինը և հասել 6 տոկոսի՝ կազմելով ընդհանուր արտահանումներից 10,615,000 դոլար: 2007-2009 թթ. Քիշում արտադրված արդյունաբերական ապրանքների դոլարային արժեքը զգալի աճ է ունեցել: 2007-ին նախորդ տարվա համեմատությամբ թեև Քիշ ազատ գոտու ընդհանուր արտահանումների դոլարային արժեքը 18 տոկոսով նվազել է, սակայն արդյունաբերական ապրանքների արժեքը ոչ միայն չի իջել, այլ ապշեցուցիչ կերպով 83 տոկոս բարձրացել և հասել է 19,451,000 դոլարի, այսինքն ընդհանուր արտահանումներից 13 տոկոս մասնաբաժին է կազմել:

2005-2013 թթ. ժամանակահատվածում Քիշ ազատ գոտուց արդյունաբերական ապրանքների արտահանման ծավալի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2009-ին, երբ արձանագրվեց 243 տոկոս թռիչքային աճ և արժեքը հասավ 88,088,000 դոլարի: Այդ տարի արդյունաբերական ապրանքների մասնաբաժինը Քիշի ընդհանուր արտահանումներից կազմել է մոտ 25 տոկոս, ինչը ապացուցում է արդյունաբերական արտադրության աճի շարունակական լինելը, սակայն դա հաջորդ տարիներին չի գոյատևել, ընդհակառակը նկատելի անկում է ապրել:


1999-ին, չնայած Քիշ ազատ գոտու ընդհանուր արտահանումների 9 տոկոսանոց աճին, փոքրանում է արդյունաբերական ապրանքների մասնաբաժինը ընդհանուր արտահանումներից: Այդ տարի արդյունաբերական ապրանքների արտահանումը 21 տոկոս իջնում է և հասնում 69,558,000 դոլարի՝ կազմելով Քիշի ընդհանուր արտահանման 18 տոկոսը:

2011-ին թեև նախորդ տարվա համեմատությամբ արդյունաբերական ապրանքների արտահանման 14 տոկոս աճ ենք տեսնում, այսինքն 79,629,000 դոլարի արդյունաբերական արտահանումներ, սակայն այդ թիվը կազմում է նույն տարվա ընդհանուր արտահանումների ընդամենը 11 տոկոսը՝ նախորդ տարվա 18 տոկոսի փոխարեն, քանի որ ընդհանուր արտահանումներն էլ բարձր աճ էին արձանագրել նույն ժամանակահատվածում: Քիշ ազատ գոտու ընդհանուր արտահանումների 87 տոկոս աճի պայմաններում՝ ոչ-արդյունաբերական արտահանումների 14 տոկոս աճն այնքան էլ գոհացուցիչ չէ:

2012-ին Քիշ ազատ գոտու ընդհանուր արտահանումների մակարդակը բավականին իջել է և նույն տարում կտրուկ անկում է նկատվել նաև արդյունաբերական ապրանքների դոլարային արժեքում: 2011-ի համեմատությամբ ընդհանուր արտահանումների 41 տոկոսանոց անկումը հանգեցրեց արդյու-

նաբերական արտահանումների 41 տոկոս անկման՝ հասնելով 47,735,000 դոլարի: Եվ չնայած դոլարային արժեքի 40 տոկոս նվազմանը, այդուհանդերձ մեծացել է Քիչի արդյունաբերական արտահանումների մասնաբաժինը ընդհանուր արտահանումներից՝ նախորդ տարվա 11 տոկոսի փոխարեն կազմելով 13 տոկոս:

2013-ին նախորդ տարվա համեմատությամբ Քիչ կղզու ընդհանուր արտադրանքների դոլարային արժեքը 172 տոկոս աճ ունեցավ, սակայն նույն մակարդակի աճ չենք տեսնում արդյունաբերական ապրանքների արտահանման դոլարային արժեքում, այլ ընդամենը այս ոլորտում 14.5 տոկոս աճ է արձանագրվել՝ ընդհանուր արտահանումներից կազմելով միայն 5 տոկոս մասնաբաժին: Նկարագրված իրավիճակը բերված է գծապատկեր 1-ում.



Գծապատկեր 1. Քիչ ազատ գոտում արտադրված արդյունաբերական ապրանքների արտահանման դոլարային արժեքը 2005-2013 թթ. (հազար դոլար)

Ինչպես երևում է գծապատկերից, եթե Քիչ ազատ գոտու 2005-2013 թթ. արդյունաբերական ապրանքների արժեքի տատանումները համեմատենք ընդհանուր արտահանումների դոլարային արժեքի տատանումների հետ, ապա կտեսնենք, որ առաջինը ավելի քիչ է ենթարկվել տատանումների, սակայն տատանումների շարունակականությունը խոսում է արդյունաբերական ապրանքների արտահանման մոդելի և ծրագրի բացակայության մասին:

Շարունակաբար անտեսվում է տեղական և արդյունաբերական ապրանքների արտահանման նշանակությունը և նրա դերը Քիշ ազատ գոտում զբաղվածության խթանման ուղղությամբ: 2005-2013 թթ. վերելքներով ու անկումներով հանդերձ, արդյունաբերական արտահանումները 2005-ին ընդհանուր արտահանումների 5 տոկոսն են կազմել, և այդ ցուցանիշը նույնն է մնացել նաև 2013-ին: Սա ապացուցում է, որ Քիշ ազատ գոտում չի գործում խելամիտ, հեռահար ու համակարգված մի ծրագիր:

Hasanali NAJAFI

The role of free zone “Kish” in thr exchange of goods of the Islamic Republic of Iran

Keywords: Free zones, commodity turnover, export, Kish

The paper analyzes data describing the role of the free zone “Kish” in barter Islamic Republic of Iran for the years 2005-2013. The study of the export of goods from the free economic zone "Kish" show that this region is now of paramount importance in the export of Iran, however, given the potential of the free economic zone and the geographical position of the island of Kish, the region is able to play an important role and increase the volumes of and the value of exports.

Гасанали НАДЖАФИ

РОЛЬ СВОБОДНОЙ ЗОНЫ “КИШ” В ТОВАРООБМЕНЕ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКИ ИРАН

Ключевые слова: свободные зоны, товарооборот, экспорт, Киш

В статье анализируются данные, характеризующие роль свободной зоны “Киш” в товарообмене Исламской Республики Иран за 2005-2013 годы. Исследование экспорта товаров из свободной экономической зоны «КИШ» показывают, что этот регион в настоящее время имеет исключительное значение в сфере экспорта Ирана, однако, учитывая потенциал свободной экономической зоны и географическое положение острова Киш, этот регион в состоянии сыграть большую роль и увеличить объемы и стоимость экспорта.

Հասանալի ՆԱՋԱՖԻ

ՔԻՇ ԱԶԱՏ ԳՈՏՈՒ ԴԵՐԸ ԻՒՅ ԱՐՏԱԳԱՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Բանալի բառեր. ազատ գոտիներ, ապրանքաշրջանառություն, արտահանում, Քիշ

Հոդվածում վերլուծվել է ԻԻՀ-ի «Քիշ» ազատ գոտու դերը Իրանի արդյունաբերական և ոչ-արդյունաբերական ապրանքների արտահանման գործընթացում 2005-2013 տարիների ընթացքում: Քիշ ազատ գոտուց արտահանվող ապրանքների դիտարկումը ցույց է տալիս, որ այս տարածաշրջանը ներկայումս բացառիկ նշանակություն ունի Իրանի արտահանումների ոլորում, սակայն նկատի առնելով Քիշ կղզու և ազատ գոտու ներուժը, նրա աշխարհագրական տեղն ու դիրքը Պարսից Օոցում և տնտեսական ռազմավարական նշանակությունը, այս շրջանն ի վիճակի է շատ ավելի մեծ դեր ստանձնել և մեծացնել իր արտահանումների ծավալն ու արժեքը: